

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-10-5-Ա

ք. Երևան

11.11.2021թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի նոյեմբերի 11-ի նիստում քննարկեց 2021 թվականի օգոստոսի 27-ին արտոնագրային հավատարմատար Ջարուիի Մանուկյանի կողմից ներկայացված՝ SANLIUYIDU (FUJIAN) SPORTS GOODS CO., LTD. ընկերության (Jiangtou Industrial Zone, Chendai Town, Jinjiang City 362211 Fujian, CN) (IR1510827) պատկերային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ 18-րդ դասի մնացած ապրանքների և 25-րդ դասի բոլոր ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական է ավելի վաղ ապրանքային նշանին, որը գրանցված է նույն ապրանքների և (կամ) ծառայությունների համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը նույնական է միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող (SANLIUYIDU (FUJIAN) SPORTS GOODS CO., LTD. Jiangtou Industrial Zone, Chendai Town, Jinjiang City 362211 Fujian (CN) IR 1359002) պատկերային ապրանքային նշանին:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով բողոքարկողի կողմից նշված այն փաստը, որ հայտատուն միջազգային բյուրո է ներկայացրել ապրանքների ցանկի սահմանափակում բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և (IR1510827) պատկերային ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ